# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. Ն. ԿՈՍԻԳԻՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

1960 թվականի հոկտեմբերի 1-ին ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահի առաջին տեղակալ Ա. Ն. Կոսիգինը ընդունեց Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին:

Ընդունելությանը ներկա էին ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ա. Պուզինը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Տ. Գասպարյանը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահի արձանագրության բաժնի պետ Ե. Ա. Տարաբրինը, ինչպես նաև Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներ գերապատիվ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և գավազանակիր հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ե. ՔՈՉԻՆՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Հոկտեմբերի 20-ին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ Ա. Ե. Քոչինյանը ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին և զրույց ունեցավ Նրա հետ:

Զրույցին ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Տ. Գասպարյանը և պաշտոնատար այլ անձինք: